

մարդկութիւնը եւ նոյն ինքը ընկերակցական Ինտերնացիոնալը — միւս կողմէն աշխարհի տնտեսական, մշակութային, ու քաղաքական էւոլյուսիոնը ձգտումն ունի ընթանալու դէպի որոշ կեդրոնացում, կ'աճի, կ'ամրանայ հետըզհետէ փոխադարձ կապն ու կախումը (interdependance) բոլոր ազգերու միջեւ, վասնզի ոչ մի ազգ ինքնաբաւ է, ոչ մէկը, անգամ ամենէն հզօրը, անգամ ամենէն հարուստը չէ կարող մնալ բացարձակ, փայլուն մեկուսացումի մէջ, եւ իւրաքանչիւրը պէտք է միւսներու սերտ գործակցութեան, իւրաքանչիւրի նիւթական եւ իմացական բարգաւաճումը կախուած է միւսներու ընդհանուր կացութենէն: Մարդկութիւնը ներգաշակ մարմին մըն է, օրգանիզմ մը, նման մարդկային անհատական օրգանիզմին եւ իւրաքանչիւր անդամի տկարացումն ու աղէտումը վաղ թէ ուշ կ'անդրադառնայ միւսներու կացութեան վրայ: Անդամ Հիւսիսային Ամերիկան, որ պատերազմէն յետոյ ահւելիօրէն հարստացաւ ու անբաւ ոսկի դիդեց, կը ձգտի դուրս գալ մօնրօզմի իր վաղեմի կղզիացումէն — որմէ կը տառապի — եւ կը մտնէ սերտ շփման մէջ Հին Աշխարհին հետ: Պահպանողական տէր-կուսակցութիւնը (Հանրապետականը) ստիպուած է յայտնի չափով մը Դեմոկրատներու (Ուիլսոնեաններու) քաղաքական դիմն առաջ տանիլ եւ շատ չանցնիլ, Ամերիկան եւս անխուսափելիօրէն պիտի մտնէ Ազգերու Դաշնակցութեան մէջ, եւ ատով պիտի բացուի նոր դարազուլտ մը մարդկային պատմութեան մէջ: Ժընեւի Մարմինը պիտի ստանայ այն ուժն ու հմայքը, որ կ'ուզէր հաղորդել անոր ամերիկեան մեծ, ողբացեալ նախագահը — այն ուժն ու հմայքը, որ անհրաժեշտ է աշխարհի բոլոր սեւ ու թերը սանձադաբելու, ազգերու միջեւ առկա մնացած խնդիրները լուծելու եւ համաշխարհային խաղաղութեան գործը ամուր եւ անսասան պատուանդանի վրայ դնելու:

Գուցէ ոչ մէկը մեծ երկիրներու այժմեան պետական գործիչներէն՝ այնքան սրտով ու համոզումով չէ փարած Ուիլսոնի գաղափարներուն, եւ գուցէ ո'չ մէկը այնքան եռանդով չի շարունակեր անոր գործը, ինչպէս Անգլիոյ

ընկերակցական Վարչապետը՝ Ռամզէյ ՄակԴոնալդ:

Սխալ է անշուշտ, երբ կ'ըսեն թէ՝ նա էապէս անգլիական հին, ազգայնական քաղաքականութիւնը պիտի առաջ մղէ: Լինելով հանդերձ խորապէս հայրենասէր, նա, իրեւ հին, քառասուն տարուան դեմոկրատ ու ընկերակցական, կը խորհի նաեւ ընդհանուր մարդկութեան շահերու մասին — եւ անգամ հեռուոր սփական յետամնաց ցեղերու մասին, զոր կ'ուզէ բարձրացնել իրենց կիսավայրենի վիճակէն եւ կը կոչէ զանոնք դէպի քաղաքակրթութիւն: Ու կրնայ ընել: Կարելի է ըսել՝ առաջին անգամը բազմաշարժար մարդկութեան դատը — խաղաղութեան եւ ընդհանուր բարօրութեան դատը — կը յանձնուի մարդու մը, որ ատոր համար ունի ոչ միայն մարդկային սիրտ եւ լայն, պայծառ իմացականութիւն, ոչ միայն համոզում ու եռանդ, այլ եւ ուժ ու հեղինակութիւն:

Հսկայական դեր է վերապահուած Անգլիոյ Աշխատաւորական կուսակցութեան եւ անոր առաջնորդին: Բաղձանք միայն, որ նա երկար մնայ իշխանութեան գլուխ, եւ առողջութիւնը, որ տկար է տարաբախտարար, թոյլ տայ իրեն ծաւալելու իր մեծ գործին համապատասխան եռանդ ու աշխատանք: Բաղձանք, որ Աշխատաւորական երեսփոխաններու թիւը աճի զաւոյ ընտրութիւններուն, որպէսզի ՄակԴոնալդեան կառավարութիւնը դառնայ տեւական, եւ ստիպուած չլինի դիմելու միշտ պատահապաշտ իրաւախոհութիւններու եւ կարողանայ ազատ, համարձակ սլացք տալ իր գաղափարներուն: Բաղձանք, վերջապէս, որ ծայր-աջակողմեան թեւը, քննադատելով հանդերձ ընկերակցական կառավարութեան պատահական շեղումները, չխաթարէ անոր գործը նեղմիտ խճրճանքներով ու անժամանակ պահանջներով:

* * *

Վերադառնանք վայրկեան մ'եւս ռուսական եւ կովկասեան խնդիրներուն: Ըսինք, արդէն — համաձայն ընկերային զիտութեան անտարակուսելի եւ բացորոշ թելադրանքին — որ աշխարհի էւոլյուսիոնը ձգտումն ունի դէպի որոշ կենդրոնացում, միութիւն: Եւ քաղաքա-